



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾՍԻՆ ԵՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻԶՈՇՆԵՐԻ ԷԹԻԿԱԿԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երևան, Ղազար Փարպեցի, 9բ հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61  
Էլ.փոստ՝ [meo@ypc.am](mailto:meo@ypc.am)

### Դիտորդ մարմնի կազմը՝

- Գեղամ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
- Աննա ԻՍԴԱԵԼՅԱՆ
- Հայկուհի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
- Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
- Արա ՂԱԶԱՐՅԱՆ
- Գեղամ ՄԱՆՈՒԿՅԱՆ
- Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
- Մեսրոպ ՄՈՎՍԵՍՅԱՆ
- Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
- Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
- Արա ՇԻՐԻՆՅԱՆ
- Նունե ՄԱՐԳՍՅԱՆ
- Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ
- Կարինե ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

### ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆԻ ԿԱՐԾԻՔԸ

#### Հայաստանի հանրային հեռուստաընկերության «Լավ երեկո» ծրագրի՝ «Արովյան» ՔԿՀ-ում նկարահանված սյուժեի վերաբերյալ

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին է դիմել ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում հասարակական վերահսկողություն իրականացնող դիտորդների խմբի անդամ, «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիայի ներկայացուցիչ Զարուհի Հովհաննիսյանը՝ Հայաստանի հանրային հեռուստաընկերության «Լավ երեկո» ծրագրի 2018թ. մարտի 9-ի թողարկման ժամանակ ներկայացված՝ «Արովյան» ՔԿՀ-ում պատիժ կրող կանանց մասնակցությամբ սյուժեի վերաբերյալ: Ըստ բողոքի հեղինակի, «Տեսանյութում ակնհայտ ծաղրում են անազատության մեջ գտնվող կանանց՝ դա ներկայացնելով որպես մարտի 8-ի թողարկում: Անազատության մեջ գտնվող մարդկանց արժանապատվությունը ոտնահարվել է, ինչը հետագայում էլ ավելի խոցելի է դարձնելու նրանց, ինչպես նաև անդրադառնալու է նրանց հետագա սոցիալիզացիայի վրա»:

Քննելով բողոքը և հետևելով հաղորդումից հետո իրադարձությունների զարգացմանը՝ ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին արձագանգաբար է, որ Հայաստանի հանրային հեռուստաընկերության ղեկավարությունը, արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանի հետ քննարկումից հետո, ընդունել է, որ տվյալ սյուժեում կա էթիկական խախտում, նկատողություն է հայտարարել «Լավ երեկո» հաղորդման ստեղծագործական խմբին, թողարկումը հեռացրել է հեռուստաընկերության պաշտոնական կայքից ու յուրօրյան ակիբից, սյուժեի հեղինակ Արուս Տիգրանյանը ֆեյսբուքյան իր էջում հանդես է եկել պարզաբանմամբ: Այս ամենով խնդիրը գուցե կարելի էր լուծված համարել: Մանավանդ, որ անձիք, որոնք, ըստ դիմողի, ծաղրի են ենթարկվել, որևէ բողոք չեն ներկայացրել:

Սակայն, նկատի ունենալով հարցի հասարակական հնչեղությունը, հետագայում նման իրավիճակներում նրբանկատություն դրսևորելու անհրաժեշտությունը, ինչպես նաև՝ Հայաստանում հումորային ու երգիծական ժանրերի հաղորդումների համար հստակ էթիկական նորմերի տարածված չլինելը, ՁԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ներկայացնում է իր կարծիքը, նկատառումներն ու առաջարկությունները.

Ա) Հաղորդումների/հրապարակումների՝ հումորային և երգիծական ժանրերին պատկանելը դրանց հեղինակներին չի ազատում մարդկանց արժանապատվությանը չվնասելու, անհիմն ծաղրի չենթարկելու պարտականությունից: Թեպետ երգիծական ժանրերի համար էթիկական պահանջներն ավելի մեղմ են, այդուհանդերձ, խոցելի խմբերին անդրադառնալու դեպքում երգիծանքը տեղին չէ:

Բ) Սյուժեի հեղինակ Արուս Տիգրանյանը ֆեյսբուքյան գրառման մեջ պնդում է, թե «կանայք շատ լավ ծանոթ էին թե՛ հաղորդմանը, թե՛ ինձ, թե՛ իմ տեսանյութերին»: Սա ներկայացվում է որպես տեսանկարահանմանն այդ կանանց գիտակցված ու կամավոր մասնակցություն: Այսուհանդերձ, Դիտորդ մարմինը կարծում է, որ խախտված է լրագրողների և լրատվամիջոցների հետ շփման փորձ չունեցող անձանց դյուրահավատությունը չչարաշահելու սկզբունքը (Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագիր, կետ՝ 2.5), քանի որ, նրանք չեն ակնկալել, որ, մասնավորապես, իրենց խոսքերն ուղեկցող ծիծաղը ծաղրական ֆոն է ստեղծելու:

Գ) Արձագանքելով նյութի վերաբերյալ քաղաքացիների քննադատական դիտողություններին, լրագրողը/լրատվամիջոցը պետք է այնպիսի պատասխան հրապարակի, որ դա չընկալվի իբրև հեզմանք և/կամ արհամարհական վերաբերմունք: Այնինչ այդպիսի ընկալման համար հիմքեր տվյալ սյուժեի քննադատություններին լրագրողի ֆեյսբուքյան արձագանքում առկա էր:

Դ) Տեսագրած նյութը մոնտաժելու ընթացքում պետք է խուսափել այնպիսի ձայնային հավելումների (ծափեր, քրքիջ և այլն) օգտագործումից, որոնք կարող են աղճատել հաղորդման մեջ ներգրավված անձանց խոսքը կամ այլ երանգ հաղորդել ասելիքի բովանդակությանը:

Ե) Ընդհանրապես, մարդիկ ոչ միշտ են գիտակցում լրատվամիջոցներում երևալու հետևանքները, և այն դեպքերում, երբ լրագրողները գործ ունեն խոցելի խմբերի հետ, պետք է առավել պատասխանատու վերաբերմունք դրսևորեն: Հետևաբար,

այուժեի հեղինակները պարտավոր էին հաշվի առնել փակ հաստատությունում ապրող մարդկանց փոխհարաբերությունների առանձնահատկությունները, ինչպես նաև՝ հետագայում հասարակությանը նրանց ինտեգրվելուն չվնասելու անհրաժեշտությունը:

Ձ) Սյուժեում ոչ բոլոր դեպքերում է պատշաճ կերպով տեխնիկապես բավարարվել հաղորդմանը մասնակցող ազատագրկված կանանց՝ նույնականացումից խուսափելու ցանկությունը:

Է) Ելնելով Հանրային հեռուստառադիոընկերության հատուկ առաքելությունից ու դրան ներկայացվող պահանջներից՝ ՁԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը հորդորում է այլ երկրների հանրային հեռարձակողների օրինակով մշակել սեփական էթիկական կանոնագիր, որում հստակ կամրագրվեն բոլոր, այդ թվում հումորային ու երգիծական ժանրերի հաղորդումների էթիկական սկզբունքներն ու դրանք չպահպանելու դեպքում պատասխանատվության ձևերը:

Ի լրումն լրատվամիջոցների էթիկայի հետ կապված խնդիրների, բողոքի առարկա հաղորդումը առիթ է տալիս նաև պետական կառույցների գործելակերպի վերաբերյալ մտահոգությունների.

- վերը նշված հանգամանքներից ելնելով՝ խնդրահարույց է քրեակատարողական հիմնարկի կողմից հումորային հաղորդում տեսագրելու համար հեռուստաընկերությանը թույլտվություն տրամադրելը՝ նկատի ունենալով հիմնարկի ղեկավարության ու ազատագրկված անձանց առանձնահատուկ հարաբերությունները, որոնք կարող են կաշկանդել անձին հրաժարվելու նկարահանումից: Այդ կարգի թույլտվության պարագայում հիմնարկը լիովին կիսում է հաղորդման մեջ էթիկայի նորմերի խախտման պատասխանատվությունը,

- մտահոգություն է առաջացնում նաև արդարադատության նախարարի կողմից, իր իրավասությունից դուրս, հանրային հեռուստաընկերության գործունեությանը անմիջական միջամտությունը, մինչդեռ հեռարձակվող լրատվամիջոցների գործունեությունը կարգավորող պետության կողմից լիազորված միակ մարմինը Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովն է:

*Ընդունվել է ՁԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի  
2018 թվականի մարտի 23-ի նիստում,  
Դիտորդ մարմնի հետևյալ կազմով՝*

Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մամուլի փորձագետ

**Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ**, Խոսքի ազատության պաշտպանության  
կոմիտեի նախագահ  
**Գնել ՆԱԼԲԱՆՂՅԱՆ**, «Արմենիա» հեռուստաընկերության «Ժամը»  
լրատվական հաղորդման գլխավոր խմբագիր,  
«Newmag» ամսագրի գլխավոր խմբագիր  
**Բորիս ՆԱՎԱՍԱՐՂՅԱՆ**, Երևանի մամուլի ակումբի նախագահ  
**Արա ՇԻՐԻՆՅԱՆ**, «Շողակաթ» հեռուստաընկերության  
գեղարվեստական ղեկավար  
**Նունե ՍԱՐԳՍՅԱՆ**, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի  
գործադիր տնօրեն  
**Կարինե ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ**, Երևանի Վ. Բյուսովի անվան  
պետական լեզվահասարակագիտական  
համալսարանի դասախոս

*[ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը](#) ձևավորվել է  
ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների  
կողմից, որոնք այս պահին թվով 46-ն են: ԴՄ-ն իր  
եզրակացություններում ղեկավարվում է Հայաստանի  
լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների  
Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին,  
վերախմբագրվել ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած  
լրատվամիջոցների 2015 թվականի մայիսի 16-ի ընդհանուր ժողովում:*